ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 60-ԱԱՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հոկտեմբերի 9–11-ին հանդիսավորությամբ նշվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 60-ամյակը: Հոբելյանական միջոցառումների տոնակատարությունների սկիզբը դրվեց հոկտեմբերի 9-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում կայացած ԳԱԱ ընդհանուր ժողովով: Ներկա էին ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը, վարչապետ Ա. Մարգարյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը, Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանը, խորհրդարանականներ, դիվանագետներ, գիտնականներ, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Վրաստանի, Ռուսաստանի հայերի միության, միջազգային կազմակերպությունների պատվիրակությունները:

Հոբելյանական հանդիսությունը սկսվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսի հայրապետական օրհնությամբ, որը եզրափակվեց ինքնատիպ ընծայի հանձնումով՝ Էջմիածնի Մայր տաճարի մանրակերտը՝ արծաթյա ափսեի վրա քանդակված:

Այնուհետև ակադեմիայի անցած 60-ամյա ուղու մասին զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը (զեկուցումը հանդամանորեն տե՛ս «Պատմա-բանասիրական հանդեսի» ներկա համարում):

Ժողովում ելույթ ունեցավ ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը: Նա ասաց, որ ակադեմիայի հիմնումը կարևոր իրադարձություն էր մեր պատմության համար, մեր ժողովրդի ե երկրի կյանքում այն ունեցավ բացառիկ նշանակություն: Ռ. Քոչարյանը նշեց, որ 1943 թ. պատերազմի ծանր օրերին ակադեմիական կենտրոն ստեղծելը սխրանք էր, ինչը նաև հայ գիտնականների նվաճումների ու դիտական մեծ ներուժի ճանաչման վկայությունն է: ՀՀ Նախագահի խոսքերով, ակադեմիայի ստեղծմամբ նոր դարաշրջան սկսվեց Հայաստանի գիտության պատմության մեջ, այն արձանագրեց աննախադեպ վերելք, դարձավ Խորհրդային Միության հզոր գիտական կենտրոններից մեկը: Մինչև անկախությունը, շարունակեց ՀՀ Նախագահը, ԳԱԱ-ն ձևված էր խորհրդային հսկայական պետության համար, որի գիտության զարդացման ռազմավարությունը կանխորոշել էր ակադեմիայի կառուցվածքն ու հետազոտությունների ուղղությունները: «Հայաստանի անկախացումից հետո ստեղծվել է նոր իրավիճակ, մեր առջև այսօր ծառացած են նոր խնդիրներ: Կարծում եմ, երկիրն ապրում է բարեփոխումների շրջան, և ակադեմիան նույնպես ներքին բարեփոխումների կարիք ունի, իսկ տեմպերն ու ուղիները պետք է որոշեք դուք ինքներդ՝ հաշվի առնելով իրողությունները»,– նշեց Ռ. Քոչարյանը: Նա նաև նկատեց, որ ակադեմիայում հետևողականորեն հաղթահարում են այն դժվարությունները, որոնցից խուսափելն անհնար է և նշեց, որ մեծ լավատեսությամբ է

նայում Հայաստանի գիտության զարգացման հեռանկարներին: «Գիտությունն այն կարևոր գործոնն է, որի շնորհիվ Հայաստանը կարող է դառնալ արդիական երկիր, ունենալ գիտատար տնտեսություն: Հայաստանը պետք է լինի մտավոր ծառայությունների տարածաշրջանային կենտրոն: Այս բանաձևը ենթադրում է հատուկ վերաբերմունք և ուշադրություն գիտության նկատմամբ, հակառակ դեպքում, նպատակն անհասանելի կլինի»,– ասաց ՀՀ Նախագահը: Նշված նպատակներին հասնելու գործում Ռ. Քոչարյանը շեշտեց ԳԱԱ-ի գիտնականների և ինստիտուտների գործունեության դերը, որպես կառույցի կարևոր առաքելություն, առանձնացրեց գիտնականների նոր սերնդի պատրաստումը:

Այնուհետև գիտության բնագավառում ձեռք բերած ակնառու նվաճումների համար և ԳԱԱ-ի հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ ՀՀ Նախագահը շուրջ երեք տասնյակ գիտնականների շնորհեց «Մխիթար Հերացի», «Անանիա Շիրակացի» և «Մովսես Խորենացի» մեդալներ և գիտության վաստակավոր գործչի կոչումներ:

Ընդհանուր ժողովում ողջույնի խոսքով հանդես եկավ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Յու. Օսիպովը: Նա մասնավորապես ասաց, որ Հայաստանում դիտական մտքի արմատները դարերի խորքն են ձգվում և որ հայ գիտությունը համաշխարհային գիտական գանձարանի զարդն է:

Վրաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ա. Տավխելիձեն Ֆ. Սարդսյանին փոխանցեց Վրաստանի նախագահ Է. Շևարդնաձեի շնորհավորանքները և՛ ակադեմիայի 60-ամյակի, և՛ Ֆ. Սարգսյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

Ուկրաինայի գիտնականների անունից ողջույնի խոսք ասաց Ուկրաինայի ԳԱ փոխնախագահ Ա. Կուրասը:

Շնորհավորանքներով հանդես եկան նաև Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը, ՌԳ հայերի միության նախագահ Ա. Աբրահամյանը, Երևանի պետհամալսարանի ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը, կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանը:

Վերջում ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարդսյանը ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամի գիպլոմ և ոսկե մեդալ հանձնեց ՌԴ պրեզիդենտ Յու. Օսիպովին: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամի գիպլոմ և ոսկե մեդալ հանձնեց Վրաստանի ԳԱ պրեզիդենտ Ա. Տավխելիձեին: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամի դիպլոմ հանձնեց ՌԴ ԳԱ համաշխարհային ինստիտուտի տնօրեն Ա. Զուբարյանին, ակադեմիկոսներ Ա. Գոնչարին և Ա. Սիսակյանին, ոսկե մեդալ՝ ՌԴ ԳԱ փոխպրեզիդենտ Պ. Լավյորովին: Բազմաթիվ աշխատողներ ստացան ՀՀ ԳԱԱ վաստակագիր և պատվոգիր:

Հոբելյանական հանդիսությունների մասնակիցների համար կազմվել էր միջոցառումների հարուստ ծրագիր: Ընդհանուր ժողովից հետո նրանք այցելեցին Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մատենադարան, ակադեմիկոսներ Ավետիք Իսահակյանի և Արամ Խաչատրյանի տուն-թանգարանները:

Հոկտեմբերի 10-ին հոբելյանական հանդիսությունների մասնակիցները այցելեցին Էջմիածին և հանդիպում ունեցան Ամենայն Հայոց կաթողիկոս

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի հետ: Ապա մեկնեցին Բյուրականի աստղադիտարան, Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարան և Հարգանքի տուրք մատուցեցին վերջինիս շիրիմին: Նույն օրը նրանք այցելեցին Մաղկաձորի Օրբելի եղբայրների թանգարան:

Հոկտեմբերի 11-ին ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանն ընդունեց տարբեր երկրներ ներկայացնող ակադեմիկոսների և գիտնականների պատվիրակությանը: Քննարկվեցին գիտության այսօրվա խնդիրները, համագործակցության ընդլայնման հեռանկարները և գիտական սերնդափոխության ապահովմանը վերաբերող հարցեր: Գիտնականները այցելեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան: Հոբելյանական հանդիսությունների մասնակիցների համար Կ. Դեմիրճյանի անվան մշակույթի կենտրոնում տրվեց համերգ:

ՀՀ ԳԱԱ-ի 60-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներն ավարտվեցին ՀՀ կառավարության ընդունելությունների տանը պատվիրակությունների պաշտոնական ընդունելությամբ: